

ԱՇԽԱՐՀԸ ՀԱՅԵՐԵՆՈՎ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՐՁԱԿ

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, 2016
ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

ԵՐԵՎԱՆ 2016

SOMERSET MAUGHAM

The Painted Veil

Novel

Translated into Armenian
Anaid Babayan Zeytounchian

Editor of Translation
Arthur Mesropyan



ZANGAK
PUBLISHING HOUSE

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ 2016 ՅԱՆՎԱՐ ԴԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ, 2016
ԲՈՒՆՈՐ ԻՐԱԿՈՒՆԵՆԵՐԸ ՄԵՐՏՄԱՆ ԵՆ:

ՍՈՄԵՐՍԵԹ ՄՈԸՄ
Երփներանգ շղարշը

Վեպ

Անգլերենից թարգմանեց
Անահիտ Բաբայան Ջեյթունցյանը

Թարգմանության խմբագիր՝
Արթուր Մեսրոպյան



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 821.111-31 Մոդմ
ԳՄԴ 84(4Մբ)-44
Մ 850

Սումերսեթ Մոդմ
Մ 850 Երփներանգ շղարշը: Վեպ / Ս. Մոդմ, Անգլ. թարգմ.՝ Ա. Բաբայան, Ջեյթոնցյան; Թարգմ. խմբ.՝ Ա. Մետրոպոլյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2016.— 272 էջ:

Վեպը քննարկում է Անգլիայի պատմության այն բեկումնային շրջանը, երբ կանայք թեմետ ունեին ընտրելու իրավունք, սակայն, ճնշվելով Մախապաշարումներից և նախկին ավանդույթների անբեկանելիությունից, ըստ էության զրկված էին այդ ընտրությունն որականացնելու հնարավորությունից: Պատմության հերոսուհին՝ Քիթին, տեղի տալով մոր հորդորներին, ամուսնավում է երիտասարդ բժշկի հետ, ում հանդեպ անտարբեր է, և շուտով սիրավեպ է սկսում մեկ այլ տղամարդու հետ, հետևանքները լինում են ավելի քան անսպասելի ու անդառնալի: Ի վերջո Քիթին հասկանում է, որ աղջիկների պես է դաստիարակեն ոչ թե որպես հեզ ու անխելք տանտիկիներ, այլ լայնախոհ ու անկախ անհատականություններ:

ՀՏԴ 821.111-31 Մոդմ
ԳՄԴ 84(4Մբ)-44

ISBN 978-9939-68-453-6
© The Royal Literary Fund
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2016
Zangak-97 LLC, 2016

...երկներանգ շղարշը,
որն ապրողները կտեսնեն անվանում:

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, «ԶԱՆԳԱԿ» ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՐՈՊԱՆԿՈՒԹՅԱՆ, 2016
ԲՈՒՆՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԷՆ

ՀԱՅԵՐԵՆ ՀԻՄՆԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀԻՄՆԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, 2016
ԲՈՒՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

ՆԱԽԱԲԱՆ

Այս պատմությունը ներշնչված է Դանտեի հետևյալ տողերից.

*Deh, quando tu sarai tornato al mondo,
E riposato de la lunga via,
Seguite il terzo spirito al secondo,
Ricorditi di me, che son la Pia:
Siena mi fé, disfecemi Maremma:
Salsi colui che innanellata pria
Disponando m'avea con la sua gemma.*

«Խնդրում եմ, երբ վերադառնաս աշխարհ և հանգստանաս երկար ճամփորդությունից, երրորդ հոգին, հետևելով երկրորդին, ասաց՝ հիշիր ինձ, ես Պիան եմ: Սիենան է ինձ ստեղծել, Մարեման է ինձ կործանել: Սա գիտի նա, ով նշանվեց ինձ հետ և ամուսնացրեց իր մատանիով»¹:

Դանտեի «Աստվածային կատակերգության» «Քավարանի» հինգերորդ երգի վերջին տողերն են, որոնք Արթուր Տայանի թարգմանությամբ հնչում են այսպես.

Ա՛հ, երբ աշխարհ վերադառնաս դու նորից
Եվ հանգչես թո՛ ճանապարհից շատ երկար,
Ասաց երրորդն երկրորդ հոգու ետևից,
Այնտեղ հիշիր նաև դու ինձ՝ Պիայիս.
Սիենայում կյանք, Մարեմայում մահ գտա.
Այդ գիտե նա, ով ինձ իր կին առնելիս
Մատս դրեց մի մատանի մարգարտյա

(Դանտե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն, Երևան, 1969, էջ 218, ծանոթագրումը՝ խմբագրի):

Ես ուսանող էի Սուրբ Թովմասի հիվանդանոցում և Զատկի տոնին վեց շաբաթ արձակուրդ ունեի: Հագուստներս թեթև ճամպրուկի մեջ և քսան ֆունտ գրպանումս՝ ճամփա ընկա: Այդ ժամանակ քսան տարեկան էի: Գնացի Ջենովա և Պիզա, հետո Ֆլորենցիա: Այնտեղ մի սենյակ վարձեցի Լաուրա փողոցի վրա (որի պատուհանից կարող էի տեսնել Մայր տաճարի հրաշալի գմբեթը)՝ մի այրի կնոջ բնակարանում, որն ապրում էր աղջկա հետ: Նա ինձ առաջարկեց (բավական երկար սակարկելուց հետո) օթևանի և սնունդի համար օրական չորս լիրա: Վախենամ դրանից լավ բան դուրս չեկավ, քանի որ ավտոժակ հսկայական էր, և ես առանց դժվարության կարող էի մակարոնի մի ողջ սար կոլ տալ: Կինը Տոսկանայի բլուրների վրա խաղողի այգի ուներ, և որքան հիշում եմ, նրա մոտ ճաշակածս կիսնտին խմածներիս մեջ լավագույնն էր Իտալիայում: Նրա աղջիկն ինձ ամեն օր խոսակերտի դասեր էր տալիս: Այն ժամանակ նա ինձ հատուն էր թվում, բայց, կարծում եմ, քսանվեցից ավելի չէր լինի: Նա մի դժբախտություն էր ունեցել. իր սիրելին, որ զինվորական էր, զոհվել էր Եթովպիայում, և աղջիկը երդվել էր կույս մնալ: Որոշված էր, որ էրսիլիան կուսանոց կմտնի մոր մահից հետո (մարմնեղ, սպիտակահեր, աշխույժ մայրը միտք չուներ մահանալու մինչև որ Տերը հարմար չգտներ), բայց նա, այնուամենայնիվ, ուրախությամբ էր սպասում այդ օրվան: Աղջիկը սիրում էր լիաթոք ծիծաղել: Մեր ճաշերն ու ընթրիքներն ուրախ էին անցնում, բայց դասավանդելիս էրսիլիան շատ լուրջ էր, և երբ ես բթացած կամ անուշադիր էի լինում, սև քանոնով հարվածում էր մատներիս: Ես պիտի որ սաստիկ բարկանայի, որ ինձ հետ երեխայի նման են վարվում, եթե դա ինձ չհիշեցնեի հին ժամանակների վարժապետներին, որոնց մասին գրքերում էի կարդացել, և որոնք ինձ մոտ ծիծաղ էին առաջացրել:

Օրերս լեցուն էին աշխատանքով: Ամեն օր մի քանի էջ էի թարգմանում Իբսենից, որ կարողանամ տիրապետել երկխոսություններ գրելու նրա ճարտար տեխնիկային և դյուրությանը, իսկ հետո, Ռեսքինի հատորը ձեռքիս, ուսումնասիրում էի Ֆլորենցիայի տեսարժան վայրերը: Ըստ ցուցումների՝ ես հիանում էի Ջոտտոյի աշտարակով և Գիբերտիի բրոնզե դռներով, համապատասխանաբար՝ խանդավառվում Բոտիչելլի կտավներով Ուֆֆիցիում և ծայրահեղ երիտասարդի արհամարհական ժեստով երես էի թեքում այն ամենից, ինչը որ վարպետը հավանության չէր արժանացրել: Ճաշից հետո իտալերենի պարապմունքներս էին, այնուհետև կրկին դուրս էի գնում՝ եկեղեցիներ այցելելու և Առնո գետի երկայնքով քայլելու ու երազելու: Ընթրիքից հետո գնում էի արկածներ որոնելու, բայց իմ անմեղությունը, ավելի ճիշտ՝ անորոշությունն այնպիսին էր, որ ես միշտ տուն էի վերադառնում նույնքան պարկեշտ, որքան դուրս գնալիս էի: Սիկորան, չնայած ինձ բանալի էր տվել, հանգիստ շունչ էր քաշում՝ լսելով իմ վերադառնալը և դուռը կողպելը (նա միշտ վախենում էր, որ ես կմոռանամ կողպել այն), իսկ ես անցնում էի գվելֆների և գիբելինների պատմության իմ ընթերցանությանը:

Ես արդեն կարդացել էի Դանտեի «Դժոխքը» (թարգմանության օգնությամբ, բայց չիմացածս բառերի համար բարեխղճորեն գործածելով բառարանը), այնպես որ Էրսիլիայի հետ սկսեցինք «Քավարանը»: Երբ մենք հասանք այն մասին, որը մեջբերել եմ սկզբում, Էրսիլիան ինձ պատմեց, որ Պիան եղել է ազնվականուհի Սիենայից, որին ամուսինը կասկածել է դավաճանության մեջ, բայց չի սպանել՝ վախենալով վերջինիս ընտանիքի հաշվեհարդարից, ուստիև տարել է նրան Մարեմմայում գտնվող իր ամրոցի նկուղները՝ վստահ լինելով, որ թունավոր զեռունները կսպանեն կնոջը: Սակայն երկար է տևել Պիայի մեռնելը, և անհամբեր ամուսինը նրան դուրս է գցել պատուհանից:

Չգիտեմ, թե որտեղից էր Էրսիլիան իմացել այդ պատմությունը, քանի որ Դանտեի՝ իմ ունեցած գրքում այդ մասին նշումը քիչ հանգամանալից էր, բայց պատմությունը ինչ-ինչ պատճառներով գրավեց երևակայությունս: Այն տարիներ շարունակ պտտվում էր մտքումս, և ես ժամանակ առ ժամանակ երկու-երեք օր խորհում էի դրա շուրջ: Սովորություն ունեի ինքս ինձ կրկնելու «Siena mi fé; disfecemi Maremma» տողը: Բայց դա իմ երևակայությունը զբաղեցնող բազմաթիվ նյութերից մեկն էր, և ես երկար ժամանակով մոռացա այն: Իհարկե, ես այն տեսնում էի որպես ժամանակակից պատմություն, սակայն չէի կարող մերօրյա կյանքում պատկերացնել մի իրավիճակ, որտեղ նման իրադարձությունները հնարավոր են: Ես այդպես էի կարծում, մինչև որ իրականացրի մի երկարատև ուղևորություն դեպի Չինաստան և գտա այս պատմությունը:

Կարծում եմ՝ սա իմ գրած միակ վեպն է, որը սկսել եմ պատմությունով, այլ ոչ թե հերոսներով: Դժվար է բացատրել հերոսի և նյութի միջև հարաբերությունը: Դու չես կարող պատմության հերոսի մասին մտածել դատարկության մեջ. այն պահին, երբ մտածում ես նրա մասին, նա աչքիդ առջև հառնում է որևէ իրավիճակում, ինչ-որ բան անելիս, այնպես որ հերոսը և առնվազն նրա հիմնական գործողությունը կարծես երևակայության համաժամանակյա գործողության արդյունք են: Բայց այս պարագայում հերոսներն ընտրվեցին՝ հարմարվելու համար նյութին, որն աստիճանաբար զարգացավ. նրանք կազմվեցին մարդկանցից, որոնց ես ճանաչել եմ տարբեր հանգամանքներում:

Գրքի հետ կապված որոշ դժվարություններ եղան, որպիսիք երբեմն պատահում են գրողի հետ: Ես սկզբնապես իմ հերոսին և հերոսուհուն Լեյն էի անվանել, սովորական մի ազգանուն, բայց պարզվեց, որ այդ անունով մարդիկ կան Հոնկոնգում: Նրանք դատի տվեցին այն թերթին, որտեղ վեպը պարբերաբար տպագրվում էր, և այդ թերթի

սեփականատերը ստիպված վճարեց երկու հարյուր հիսուն ֆունտ, ու ես ազգանունը դարձրի Ֆեյն: Այնուհետև գաղութային կառավարչի օգնականը սպառնաց դատի տալ՝ կարծելով, թե ինքն է պիտակավորվել: Ես զարմացած էի, քանի որ Անգլիայում մենք կարող ենք բեմ բարձրացնել կամ վեպի հերոս դարձնել վարչապետին, Քենթրբերիի արքեպիսկոպոսին կամ լորդ-կանցլերին, և այս բարձրաստիճան պաշտոնյաները հոնքն էլ չեն շարժի: Ինձ համար տարօրինակ էր, որ նման անկարևոր պաշտոնը ժամանակավորապես զբաղեցնողը կարժի, թե իրեն ենթակառուցել, բայց անախորժություններից խուսափելու համար Հոնկոնգը փոխեցի Չին-Յեն² երևակայական գաղութի: Գիրքն արդեն հրատարակված էր, երբ գեպը պատահեց և արժարժվեց: Մի խումբ ճարպիկ գրախոսներ, որ ստացել էին այն, այս կամ այն պատրվակով չվերադարձրին իրենց օրինակները: Այժմ դրանք մատենագիտական արժեք են ձեռք բերել, կարծում եմ՝ մյուս վաթսուն օրինակ կա, որոնք գրքի հավաքորդները գնում են բարձր գնով:

I

Նա մի զարմացած ճիչ արձակեց:

— Ինչ եղավ, — հարցրեց տղամարդը:

Չապած փեղկերը զգված սենյակի խավարին՝ նա կնոջ դեմքին տեսավ հանկարծակի մտազարություն և սարսափ:

— Հենց նոր ինչ-որ մեկը փորձեց դուռը բացել:

— Գուցե աման³ է կամ ծառաներից մեկը:

— Նրանք երբեք այս ժամին չեն գալիս: Գիտեն, որ կեսօրից հետո ես միշտ քնում եմ:

— Ուրիշ ո՞վ կարող է լինել:

² Չին-Յենն այժմ փոխարինվել է Հոնկոնգով (հեղինակի ծանոթությունը):

³ Ամա—սպասուհի, աղախին (այս և հետագա ծանոթագրությունները Արթուր Մետրոպոլիսի):

— Ուղթերը, — շնչաց կինը դողացող շուրթերով:

Նա մատնացույց արեց տղամարդու կոշիկները: Վերջինս փորձեց հագնել դրանք, բայց իր նյարդայնության պատճառով, կնոջ տագնապից ազդված՝ չկարողացավ: Բացի այդ, կոշիկներն էլ նեղ էին: Անհամբերության ծանր շնչառությամբ կինը նրան կոշիկի եղջյուրիկ տվեց: Վրան գցեց կիմոնոն և ոտաբոբիկ գնաց դեպի իր հարդասեղանը: Մազերը խառնված էին, սանրվեց, մինչ տղամարդը հագնում էր երկրորդ կոշիկը: Կինը նրան տվեց թիկնոցը:

— Ինչպե՞ս դուրս գնամ:

— Ավելի լավ է՝ մի քիչ սպասես, թող ես դուրս նայեմ, տեսնեմ՝ ինչ կա:

— Դա չի կարող Ուղթերը լինել: Նա ժամը հինգից շուտ դուրս չի գալիս լաբորատորիայից:

— Ուրեմն ո՞վ էր:

Հիմա նրանք շուկով էին խոսում: Կինը դողում էր: Տղամարդուն թվաց, որ արտակարգ իրավիճակում կինը կարող է գլուխը կորցնել, և հանկարծակի զայրացավ նրա վրա: Եթե անվտանգ չէր, ունչո՞ւ ասաց, որ գա: Կինը շունչը պահեց և բռնեց տղամարդու թևը: Վերջինս հետևեց կնոջ հայացքի ուղղությանը: Նրանք կանգնեցին պատուհանների դիմաց, որը բացվում էր դեպի պատշգամբ: Պատուհանները փակ էին, փեղկերը՝ կողպված: Նրանք նկատեցին, որ սպիտակ հախճապակե բռնակի գլխիկը դանդաղորեն պտտվեց: Ոչ մի ոտնաձայն չէին լսել պատշգամբից: Սարսափելի էր տեսնել այդ լուռ շարժումը: Անցավ մեկ րոպե, և ոչ մի ձայն: Հետո մի գերբնական սուկալիությամբ, նույնքան աննկատ, անաղմուկ և սարսափելի ձևով նրանք տեսան, որ մյուս լուսամուտի բռնակի սպիտակ հախճապակե գլխիկը նույնպես պտտվեց: Այնքան սարսափելի էր, որ Քիթին, նյարդերին տեղի տալով, բերանը բացեց, որ ճչա, բայց տղամարդը, տեսնելով այդ, արագ ձեռքը դրեց կնոջ բերանին, և Քիթիի ձայնը խեղդվեց նրա մատների տակ:

Լռություն: Քիթին հենվեց տղամարդու վրա: Ծնկները դողում էին, և տղամարդը վախենում էր, որ նա կուշաթափվի: Խոժոռ դեմքով, բռունցքները սեղմած՝ նա Քիթին տարավ դեպի մահճակալը և նստեցրեց: Կինը սավանի նման սպիտակել էր, և, չնայած տղամարդու թուխ մաշկին, նրա այտերը նույնպես գունատ էին: Տղամարդը կանգնեց նրա կողքին՝ հիպոսացած հայացքով նայելով հախճապակե բռնակին: Նրանք չէին խոսում: Հետո տղամարդը նկատեց, որ Քիթին արտասվում է:

— Աստծու սիրուն, մի՛ արա, — ջղային շնչաց տղամարդը, — եղածը եղած է: Ընկերովի մահը հարսանիք է:

Քիթին փնտրեց թաշկինակը, և տղամարդը, հասկանալով, թե ինչ է կինը ուզում, տվեց նրա պայուսակը:

— Ո՛ր է գլխարկդ:

— Թողել եմ ներքևում:

— Ա՛խ Աստված:

— Ասում եմ՝ հավաքիր քեզ: Մեկ տոկոսով է հնարավոր, որ Ուոլթերը լինի: Ինչո՞ւ ես կարծում, որ նա պիտի տուն գար այս ժամին: Ես երբեք օրվա ընթացքում տուն չի գալիս, չէ՛:

— Երբեք:

— Ես քեզ հետ ինչով ուզում ես գրագ կգամ, որ դա աման էր:

Քիթի դեմքով ժպիտի մի ստվեր անցավ: Տղամարդու թավ, սփռվիչ ձայնը նրան վստահություն ներշնչեց. կինը բռնեց նրա ձեռքը և սիրալիր սեղմեց: Տղամարդը մի քիչ էլ սպասեց, որ Քիթին հավաքի իրեն, ապա ասաց.

— Նայիր, մենք չենք կարող հավերժ այստեղ մնալ: Կուզե՞ս գնանք դուրս և տեսնենք, թե ինչ կա:

— Չեմ կարծում, որ կարող եմ կանգնել:

— Կոնյակ կամ այստեղ:

Քիթին գլխով «ոչ» ասաց: Տղամարդու դեմքը մռայլվեց. նա անհամբեր էր դառնում, չգիտեր ինչ անել: Հանկարծ Քիթին ավելի ուժեղ սեղմեց նրա ձեռքը.

— Գուցե նա այնտեղ սպասում է:

Տղամարդը ճիգ թափեց ժպտալու, իսկ ձայնը պահպանեց մեղմ, համոզիչ եղանակը, որի ազդեցությունը նա լիովին գիտակցում էր.

— Դա այնքան էլ հավանական չէ: Մի քիչ քայջ եղիր, Քիթի: Ինչպե՞ս կարող էր քո ամուսինը լինել: Եթե նա եկած լիներ և մի անծանոթ գլխարկ տեսած լիներ նախասենյակում, հետո վերև գալով՝ քո սենյակի դուռը փակ գտներ, անպայման աղմուկ կբարձրացներ: Ծառամերից մեկը կլիներ: Միայն չինացին է բռնակն այդպես պտտեցնում:

Քիթին արդեն իրեն լավ էր զգում:

— Հաճելի բան չի եղել, եթե նույնիսկ միայն աման էր:

— Նրան կարելի է կաշտել, իսկ եթե անհրաժեշտ է, կարող եմ Աստծու կրակը թափել գլխին: Կառավարական պաշտոնյա լինելը մեծ բան չէ, բայց երբեմն կարելի է օգտվել այդ դիրքից:

Նա պիտի որ իրավացի լիներ: Քիթին կանգնեց և շրջվելով դեպի տղամարդը՝ թները լայն բացեց: Վերջինս գրկեց նրան և համբուրեց շուրթերը: Դա այնպիսի մի հաճույք էր, որ հավասար էր ցավի: Քիթին պաշտում էր նրան: Տղամարդը բաց թողեց կնոջը, և Քիթին մոտեցավ պատուհանին: Ետ տարավ փականքը, բացեց փեղկերն ու մի քիչ դուրս նայեց: Ոչ ոք չկար: Քիթին դուրս եկավ, աչք նետեց ամուսնու զգեստասենյակին, ապա սեփական առանձնասենյակին: Երկուսում էլ մարդ չկար: Վերադարձավ ննջարան և ձեռքով նշան արեց.

— Ոչ ոք չկա:

— Ես հավատացած եմ, որ մեր աչքին է երևացել:

— Մի՞ ծաղրիր: Ես սարսափել էի: Գնա նստիր իմ առանձնասենյակում: Ես էլ գուպաներս ու կոշիկներս կհագնեմ:

Տղամարդն արեց այն, ինչ որ Քիթին ասաց, և հինգ րոպե անց կինը միացավ նրան: Տղամարդը ծխում էր:

- Լսիր, կարո՞ղ եմ կոնյակ և սոդա խմել:
- Այո՛, հիմա ծառային կկանչեմ...
- Չեմ կարծում, թե որևէ բան է եղել ի վնաս քեզ...

Նրանք լուռ սպասեցին, մինչև որ սպասավորը եկավ: Քիթին կարգադրեց խմիչք բերել, ապա ասաց.

— Զանգիր լաբորատորիա և հարցրո՞ւ, թե Ուոլթերն այնտեղ է: Նրանք քո ձայնը չեն ճանաչում:

Տղամարդը վերցրեց ընկալուչը և հարցրեց հեռախոսահամարը: Ապա հետաքրքրվեց, թե այնտեղ է արդյոք դոկտոր Ֆեյնը: Ցած դրեց ընկալուչը:

— Կեսօրից հետո այնտեղ չի եղել, — ասաց տղամարդը: — Հարցրո՞ւ սպասավորին, թե արդյոք նա եղել է այստեղ:

— Ես չեմ համարձակվի: Շատ տարօրինակ կլինի, եթե այստեղ եղած լինի, ու ես նրան տեսած չլինեմ:

Ծառան բերեց խմիչքը, և Թաունսենդն իր բաժակը լցրեց: Երբ նա Քիթին խմիչք առաջարկեց, վերջինս գլխի շարժումով մերժեց:

- Ի՞նչ ենք անելու, եթե Ուոլթերն էր, — հարցրեց նա:
- Միգուցե նրա համար միևնույնն է:
- Ո՞ւր, Ուոլթերի՞:

Նրա ձայնի եղանակը թերահավատ էր:

— Ինձ միշտ ցնցել է նրա երկչոտությունը: Կան տղամարդիկ, որ տեսարաններ չեն հանդուրժում: Նա լավ է հասկանում, որ սկանդալ սարքելով՝ ոչինչ չի շահի: Ես ոչ մի վայրկյան չեմ հավատում, որ Ուոլթերն էր, բայց եթե նույնիսկ նա էր, իմ կարծիքով ոչինչ էլ չէր անի: Բանի տեղ չէր դնի, կարծում եմ:

Քիթին մի պահ մտածմունքի մեջ ընկավ:

- Նա սաստիկ սիրահարված է ինձ:

— Դե շատ ավելի լավ: Դու կկարողանաս խորամանկել նրան:

Թաունսենդը ժպտաց իր հմայիչ ժպիտով, որը Քիթին այնքան անդիմադրելի էր համարում: Դա մի դանդաղ ժպիտ էր, որ սկսվում էր նրա պայծառ կապույտ աչքերից և նկատելի կերպով տարածվում դեպի գեղեցիկ բերանը: Նա ուներ փոքր, սպիտակ, հավասար ատամներ: Շատ գրավիչ ժպիտ էր, որը հալեցնում էր Քիթիի սիրտն իր մարմնում:

— Ես այնքան էլ ազդված չեմ, — ասաց Քիթին փոքրինչ զվարթությամբ, — և դա արժեր:

— Իմ սխալն էր:

— Ինչո՞ւ եկար: Ես զարմացա՝ քեզ տեսնելով:

— Չէի դիմանում:

— Սիրելի՛ս:

Քիթին մի փոքր թեքվեց Թաունսենդի վրա՝ իր սև ու փայլուն աչքերը կրքոտությամբ նրա աչքերի մեջ սևեռած, բերանը ցանկությունից մի փոքր կիսաբաց, և տղամարդը գիրկն առավ նրան: Քիթին էքստազի մի հառաչանքով հանձնվեց նրա թևերին:

— Դու գիտես, որ միշտ կարող ես ինձ ապավինել, — ասաց Թաունսենդը:

— Ես այնքան երջանիկ եմ քեզ հետ: Կուզեի քեզ երջանկացնել այնքան, որքան դու ես ինձ երջանկացնում:

— Է՛հ չես վախենում:

— Ես ատում եմ Ուոլթերին, — պատասխանեց Քիթին:

Թաունսենդը չգիտեր ինչ պատասխանել, այնպես որ համբուրեց Քիթիին: Զգում էր նրա շատ փափուկ դեմքն իր դեմքի դիմաց: Սակայն մի պահ, բռնելով Քիթիի դաստակը, նայեց նրա ոսկե ժամացույցին:

— Գիտե՞ս՝ հիմա ինչ պիտի անես:

— Պիտի անհետանանս, — ժպտաց Քիթին:

Թաունսենդը գլխով արեց: Քիթին նրան ավելի ամուր գրկեց, բայց զգաց, որ տղամարդու ցանկությունն անցավ, և բաց թողեց նրան:

— Ամոթ է, ինչպե՞ս ես թողնում գործը: Դե գնա՛:

Թաունսենդը երբեք չէր դիմանում սիրաբանելու գայթակղությանը:

— Թվում է՝ ուշքդ գնում է ինձնից ազատվելու համար, — ծիծաղելով ասաց նա:

— Դու գիտես՝ ես երբեք չեմ ուզում, որ գնաս:

Քիթի պատասխանը ցածր էր, խոր և լուրջ: Թաունսենդը գոհունակությամբ ծիծաղեց:

— Քո փոքրիկ, գեղեցիկ գլուխը քի գբաղեցրու խորհրդավոր այցելուով: Ես վստահ եմ, որ ամեն էր: Իսկ եթե որևէ անախորժություն լինի, երաշխավորում եմ, որ կազատեմ քեզ դրանից:

— Այդ հարցում շատ փորձ ունեմ:

Թաունսենդի ժպիտը հաճելի էր և սփոփող.

— Ոչ, բայց հույս ունեմ, որ ուսերիս գլուխ ունեմ:

3

Քիթին գնաց պատշգամբ և նայեց, թե ինչպես է Թաունսենդը դուրս գալիս: Նա ձեռքով արեց Քիթիին, ինչը շատ հաճելի էր կնոջը: Թաունսենդը քառասունմեկ տարեկան է, բայց սլացիկ կազմվածք ունի և տղայի թեթև քայլվածք:

Պատշգամբը ստվերի մեջ է, և Քիթին ծուլորեն, հանգիստ սրտով ու սիրուց բավարարված, սկսեց ճեմել: Նրանց տունը Հեփի Վելլում է՝ բլրի փեշին. նրանք չէին կարող ապրել ավելի ցանկալի, բայց և ավելի թանկ բլրի գլխին: Քիթի վերացած հայացքն ընկավ կապույտ ծովին և նավահանգստում խռնված նավերին: Նրա միտքը միայն իր սիրեկանի շուրջն էր պտտվում:

Կարդացե՛ք գիրքն ամբողջությամբ՝ ձեռք բերելով «Զանգակ» գրատնից և Հայաստանի այլ գրախանութներից, ինչպես նաև առցանց՝ www.zangak.am կայքէջից:

ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ, 2016

ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ:

Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով՝ առանց հրատարակչի գրավոր համաձայնության: